**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/13» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 30-ը մարտի 2018թ. ժամը 12[10]

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան,

**գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Հ. Ավետիսյան,

ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության մատակարարման բաժանմունքի պետ, բ/ծ կապիտան Ն. Հարությունյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա լեյտենանտ Ս. Նիկոլյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան,

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/13» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝5, դեմ՝ 0:*

**1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

1.1 Քննարկելով 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ՝ **«Մեդիտք» և «ԹԱԳՀԷՄ» ՍՊԸ-ների** կողմից ներկայացված փաստաթղթերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնակիցների կողմից ներկայացված ապրանքներիի տեխնիկական բնութագրերը տարբերվում են հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրից և անհրաժեշտ է դրանց մանրամասն ուսումնասիրություն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել **06.04.18թ.**

1.2 06.04.2018թ. կայացած նիստում, շարունակելով աշխատանքները՝ հանձնաժողովը, որոշեց, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **«Մեդիտք» և «ԹԱԳՀԷՄ» ՍՊԸ-ների** կողմից ներկայացված առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

**«ԹԱԳՀԷՄ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված՝ որակավորման փաստաթղթերը և պարզվել է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N 6.1) ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով տվյալ չափաբաժնի համար նախատեսված տեխնիկական բնութագրին, մասնավորապես, ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված է, որ մարտկոցները պետք է լինեն 14.4V/**1.4 Ah**, լիցքավորման ժամանակը՝ **3.5 ժամ**, այնինչ «ԹԱԳՀԷՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում նշված է՝ մարտկոցները՝ 14.4V/**1.5 Ah**, լիցքավորման ժամանակը՝ **4 ժամ** (ընդգծված ցուցանիշների մասով առկա է անհամապատասխանություն):

«Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ որակավորման փաստաթղթերը և պարզվել է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N 6.1) ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով տվյալ չափաբաժնի համար նախատեսված տեխնիկական բնութագրին: Ստորև համեմատական կարգով ներկայացվում են հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված այն ցուցանիշները, որոնք բացակայում են մասնակցի առաջարկում կամ չեն համապատասխանում դրան.

| Ըստ ընթացակարգի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրի | Ըստ մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի |
|---|---|
| Պաշտպանվածության դասը՝ IP42 | Պաշտպանվածության դասը՝ IP24 |
| Դեղորայքի խմբագրման մենյու, դեղորայքի քանակը մենյուի մեջ ոչ պակաս քան 64 | Բացակայում է ներկայացված բնութագրում |
| Ինֆուզիայի արագությունը՝ 1.0 մլ/ժ քայլով՝ ոչ պակաս քան 100 – 1500 մլ/ժ | Ինֆուզիայի արագությունը՝ 1.0 մլ/ժ քայլով՝ ոչ պակաս քան 1000 – 1500 մլ/ժ |
| Ինֆիուզիայի անսահմանափակ դոզայի տեղադրման հնարավորություն, մուտքագրված ծավալը՝ ոչ պակաս քան 0.1-99999 մլ | Ինֆիուզիայի անսահմանափակ դոզայի տեղադրման հնարավորություն, մուտքագրված ծավալը՝ ոչ պակաս քան 0.1-9999 մլ |
| Բոլոր ծրագրավորված պարամետրերի պահպանում սարքի անջատման ժամանակ, իրադարձությունների պահպանում ոչ պակաս քան 2000 գրառում | Բացակայում է ներկայացված բնութագրում |
| Նախազգուշացնող ազդանշան՝ ոչ պակաս քան 15 հատ | Նախազգուշացնող ազդանշան՝ ոչ պակաս քան 13 հատ |
| Արագությունը KOR ռեժիմում՝ ոչ պակաս քան 0.1-10 մլ/ժ | Արագությունը KOR ռեժիմում՝ 0.5 մլ/ժ |

Բացի այդ, «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված N 6-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից իրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումում) և Հավելված 6.1-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում) հաստատված չեն թվային էլեկտրոնային ստորագրությամբ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝5, դեմ՝ 0:*

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել մասնակիցների կողմից ներկայացված շտկման քննարկման վերջնաժամկետի հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| Գնահատող(ԳԱՊ) | Հ. Մելիքյան |
| Գնահատող | Հ. Ավետիսյան |
| Գնահատող | Ն. Հարությունյան |
| Գնահատող | Ս. Նիկոյան |
| Գնահատող | Կ. Բրուտյան |
| Գնումները համակարգող՝ | Ա. Մաղաքյան |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/13» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան — 10-ը ապրիլի 2018թ.
ժամը $11^{30}$

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան,
**գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Հ. Ավետիսյան,
ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության մատակարարման բաժանմունքի պետ, բ/ծ կապիտան Ն. Հարությունյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա լեյտենանտ Ս. Նիկոյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան,
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/13» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

(Ա. Մաղաքյան)

1. **«Մեդիտք» և «ԹԱԳՀԷՄ» ՍՊԸ-ների** կողմից որպես շտկում ներկայացված տեխնիկական բնութագրի քննարկամ և ընտրված մասնակցի որոշման մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**1. «Մեդիտք» և «ԹԱԳՀԷՄ» ՍՊԸ-ների կողմից որպես շտկում ներկայացված տեխնիկական բնութագրերի քննարկամ և ընտրված մասնակցի որոշման մասին.**

(Ա. Մաղաքյան)

1.1 Քննարկելով՝ **«Մեդիտք» և «ԹԱԳՀԷՄ» ՍՊԸ-ների** կողմից որպես շտկում ներկայացված տեխնիկական բնութագրերը գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը՝ որոշեց **«Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից** ներկայացված տեխնիկական բնութագրերը գնահատվել բավարար՝ գնանշման հարցման հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

***ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:***

1.2. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների ներկայացված տեխնիկական բնութագրերը գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/13» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին, վերջիններիս հայտարարել ընտրված(հաղթող) մասնակիցներ 4-րդ չափաբաժնում՝ «ԹԱԳՀԷՄ» ՍՊԸ-ին, իսկ 5-րդ չափաբաժնում՝ «Մեդիտեք» ՍՊԸ-ին և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/13» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

-----------------------------------------------------------------------------------------------

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/13» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| Գնահատող(ԳԱՊ) | Հ. Մելիքյան |
| Գնահատող | Հ. Ավետիսյան |
| Գնահատող | Ն. Հարությունյան |
| Գնահատող | Ս. Նիկոյան |
| Գնահատող | Կ. Բրուտյան |
| Գնումները համակարգող՝ | Ա. Մաղաքյան |